

581.1  
S - 39

ԽՈՂ ԿՈՄԻՍԱՐԻՒՄ — ՍՊԸ. ԴԱՍ. ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԱՍՏԵԱԾՈՅ ԴՐՈՅ ԴՐՈՅ ԴՐՈՅ

ԲՆՈՒԹՅՈՒՆ ՅԵԿ ԱՇԽԱՏԱՆՔ № 1  
Խմբ. [REDACTED] Խմբ. [REDACTED]

# ՏԵՐԵՎԱԹԱՓ ՅԵԿ ԱՃԱՆ ԳՈՒՅՆԵՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵԿԵՎ 6 — 1927

22.08.2013

14393

29 JUL 2010

ԱՐԵԱՆԱԳԻՒԹ Ա. ԱՌԵՎԱՆԻ ԴՐԱՄՈՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ

**№ 1 «ԲԱՐԵՎԻ ԹՅՈՒՆ ՅԵՎ ԶԵԽՈՍՅՈՒՆ» № 1  
Խմբ. 5 կազմ. յիշ. Ա. Հայուս**

581.1  
S-39 w

# ՏԵՐԵՎԱԹԱՓ ՅԵՎ ԱՇԽԱՆ ԳՈՒՅՆԵՐ

1002  
1001



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**a b c b q m 6 - 1 9 2**

## ՏԵՐԵՎԱԹԱՓ ՅԵՎ ԱՇԽԱՆ

### ԳՈՒՅՆԵՐ

#### Ա. ՏԵՐԵՎԱԹԱՓ

Բոլորին ել հայտնի յե, վոր աշունը մոտենալուն պես անտառում, պարտեզներում՝ և աշղիներում ծառերն սկսում են մերկանալ իրենց տերեներից: Վորբան ուշ աշուն, այնքան ավելի առատությամբ են թափվում նրանք և գետինը ծածկում գեղնագույն գորգերով: Ճշմարիտ ե, մենք այնքան ել գոհ չենք այդ յերեսույթից, բայց վորքան մտածելու բան և տալիսնա մեր մտքին:

Յերբ վոր ձեզ հարց են տալիս, թե ինչո՞ւ են տերեները թափվաւմ: Պուք իսկույն շտապում եք պատասխանել—աշնան ցրտերի պատճառով:

Գրառեալգար № 287ր. հ. 585 Տիրամ 6000  
Պահպատի յերկրորդ տողարան Յերեվանում 882

Սակայն յեկեք ձեզ հետ միասին սաշնան տերեաթափի պատճառը վորոնենք և այն ժամանակ կը տեսնենք, վոր ցուրաը չե նրա անժիջական պատճառը։ Ամենից առաջ ձեզ մի տեղեկություն տանք, վոր լսած չեք լինի։ Կան այնպիսի յերկիրներ, վորտեղ տերեաթափը կատարվում է, ընդհակառակը, տարվա չորս յեղանակներին։




Հիմա արգեն գուշը իրավունք ունեք մեդ հարցնելու, թե յեթե ցուրտը չե տերեաթափի պատճառը, ապա վհրն ե։ Այս հարցի ճիշտ պատասխանն իմանալու համար, հարկավոր է նախ և առաջ պարզեր թե ինչ կազմություն ունի տերել և ինչ գեր է կատարում նա բույսի կանքում։

## I. ՏԵՐԵՎԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ

### ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչ մեծութիւն կամ ձեի տերե ել վոր վերցնեք, առաջին հերթին յերկու բան կտեանեք— տերեակոթը և լայն կանաչագույն-սկուտեղը։ Պատահում են և այնպիսի տերեներ, վորոնք կոթ

շունեն, նրանց սկուտեղն անսիջապես նստած է լինում ցողունի վրա։ Սկուտեղների ձևերը բազմազան են՝ բոլորեզ, ատամնավոր, բըրթակավոր, կատարվում են, ընդհակառակը, տարվա չորս յեղանակներին։



Նկ. 1 Զանազան ձևի տերեներ


վաքածուներ կը կազմեք։

Վերցրեք վորեւե տերե, բռնեցեք լուսի դիմաց, գուշը նրա մեջ կը նկատեք զանազան ուղ-

գությամբ հաստ ու բարակ թելեր, վորոնք կոշ-  
վում են տերեւաջղեր կամ ներվեր: Այդ


ներվերը վոչ միայն տե-  
րեի կմախքն ունեցիուն  
են, այլ և իրենց մեջ ու-  
նեն առանձին խողովակ-  
ներ, վորոնց միջով բուլ-  
սի սննդատու նյութերն  
ու ջուրը վերև ներքեւ են  
շարժվում: Այս եւ տերեի  
արտաքին կազմը:

Յեթե մեր աչքն ըն-  
դունակություն ունենալը  
շատ մանր բաներ նկատելու, այն ժամանակ  
հեշտությամբ կը կարողանալինք նաև տերեի  
ներքին կազմը դիտել: Բայց դրա համար կան  
հատուկ խոշորացնող ապակիներ կամ մի գործիք-  
մանը ադիտակ, վորոնց ոգնությամբ կարողա-  
նում ենք մեր աչքին անտեսանելի բաներն ել  
տեսնել: Ահա, յերբ տերեի բարակ ու թափանցիկ  
հատվածը դիտում ենք վերև հիշած գործիքներով:



Նկ. 2 Տերեի ներվերը

բոլորովին այլ բաներ ենք տեսնում այստեղ –  
տափակ, գլանաձև, բազմանկյունի և այլ  
ձևի աղբաւաննաման մարմիններ, վորոնց մենք  
ըջիջներ ենք ասում: Այդ բջիջների մասին  
կարելի յէ ուրիշ շատ տեղեկություններ տալ ձեզ,  
բայց հիմա այստեղ մեզ համար նրանք այնքան  
կարենը չեն: Միայն մի առանձին ձեփ բջիջների  
վրա պիտի ձեր ուշադրությունը դարձնել, վո-



Նկ. 3 Հատած տերը

րոնք մեծ մասամբ տերեի սասրին յերեսի վրա  
յեն լինում: Նրանք կիսալուսանածեն և յերկուսը  
միասին կազմում են, կարծես, պատու հանի  
փեղկեր, վորոնց արանքում գտնված անցքերը  
կոչվում են հերձանցքեր: Ահա, այդ հեր-  
ձանցքերով թարգ ողը ներս և մտնում տերենք

մասերը, իսկ ՓՀՄ ուժ ողլ ջրային դոլորշիների  
հետ միասին դուրս են գալիս:

Այսպես տերեի արտաքին և ներքին մասերի  
հետ ծանոթանալուց հետո, մենք այժմ կարող  
ենք հասկանալ նրա նշանակությունը բույսի հա-  
մար:

Տերեր վոչ միայն բռւյսին ոգ ե մա-  
տա կարարում, այլ և կանոնավորում ե  
նրա սննդաբար նյութերի շրջանառու-  
թյունը՝ արմատներից վերեւ բարձրա-  
ցող ջրերը գուրշիացնելու միջոցով:

Գիտնականները հաշվել են, վոր մեկ դես-  
տին վարսակի արտը տարեկան դոլորշացնում  
է 100,000 փութ ջուր:

Տերեի մեկ դերն ել այն ե, վոր արեի  
բռւյսի ոգնությամբ նա ողից սնունդ ե  
վերցնում բռւյսի համար:

## 2. ԻՆՉՈՐԻ ՅԵՆ ԹԱՓՎՈՒՄ ՏԵՐԵՎՆԵՐԸ

Տերեի կազմության և նրա կատարած դերի  
հետ ծանոթանալուց հետո, հիմա մեզ համար  
դժվար չի լինի և այս հարցին պատասխանելու:

— Զրի պակասությունից:

— Ի՞նչպես—կը բացականչեք դուք:

— Այն, զրի պակասությունից:

Այն յերկում, վորտեղ բռւյսերը հոգա-

վորություն ունեն տարին տասներկու ամիս ան-  
ընդհատ աճելու և զարգանալու, այնտեղ տերե-  
վաթափը կատարվում ե աննկատելի նոր լն-  
ձկուղներ արձակելու հետ միասին՝ նրանց տակ  
դժնված հին տերեները թափվում են և նրանց  
անմիջապես փոխարինում են նորերը։ Ուրեմն  
այդ յերկում տերեաթափն ու նոր տերեների  
բացվելը կատարվում են միաժամանակ ամբողջ  
տարին:

Տաք յերկիրներում, վորաեղ անձրեները մի  
քանի ամսով դադարում են և սկսվում են շոք և  
յերաշտ ամիսները, ծառերն իսկուն մերկանում  
են։ Բայց հենց վոր սկսում են խոնավ ու զով  
յեղանակները՝ նրանք նորից ծածկվում են տերե-  
ներով։

Բարեխառն յերկիրներում, ինչպես մեր յեր-  
կիրն ե, վորտեղ անձրեային և չորային յեղանակ-  
ների մեջ այդպես խիստ տարրերություն չկա,  
տերեաթափն սկսվում ե ցրտերն ընկնելուն  
պես:

Զարմանալու վոչինչ չկա ի հարկե, վոր մի  
դեպքում տերեաթափը կատարվում ե շոքերն  
սկսվելիս, իսկ մյուս դեպքում՝ ցրտերն ընկնելիս։

Մենք պարզ տեսնում ենք, վոր տերեաթափի  
անմիջական պատճառը ջրի պակասությունն  
ե, վոր առաջանում ե, թե տաքից և թե ցրտից։

### 3. ՏԵՐԵՎԱԹԱՓԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տերեւաթափի պատճառն իմանալուց հետո,  
հետաքրքիր ե, թե նա ի՞նչ կարեոր նշանակու-  
թյուն ունի բույսերի համար:

Ամենից առաջ՝ տերեւաթափի դադարելուց  
հետո բույսն ազատվում է գոլորշիացման յերե-  
փայթից, վոր ամառվատաք յեղանս կներին վոր-  
քան նա անհրաժեշտ եր, նույնքան վնասակար և  
կորստաբեր կարող եր լինել նրա համար ձմեռվա  
ցըտերին: Իհարկե, խոսքը մեր յերկրի մասին ե:

Յերկրորդ՝ թափված տերեւները քայլքայվում  
և փառմ են: Նրանց վորոշ մասերը գոլորշիանում  
և ցնդում են սղի մեջ, իսկ մլուս մասերը խառ-  
նըվելով հողի հետ կազմում են փառհող:

Փահողը բույսի համար շատ խոշոր կարե-  
վորություն ունի և արժե նրա հատկությունների  
հետ լավ ծանոթանալ: Դուք այդ մասին կը կար-  
գաք մեր մեկ ուրիշ գրքույկում: «Հողի մշակում»:  
Բայց այստեղ ել ավելորդ չի լինի նրա մի քանի  
հատկությունները թվել:

Ամենից առաջ՝ թափված տերեւները իրար  
վրա գարսվելով կազմում են մի փխրուն շերտ,  
վոր սպունգի նման ընդունակ և մեծ քանակու-  
թյամբ անձրեսի ջուր ծծել և լերկար ժամանակով  
խոնավություն պահել իր մեջ:

Փահողի շերտով ծածկված հողն ապահով-  
ված է չորանալու վահանգից:


Փահողի հաստ շերտով ծածկված հողը  
պաշտպանված է թե ձմեռվա խիստ ցրտերից և  
թե ամառվա տաքերից: Նա ջերմության վատ  
հաղորդիչ է, ինչպես ամեն մի ծակոտիավոր  
մարմին:

Վերջապես նրա ամենամեծ նշանակությունն  
այն է, վոր նա իր մեջ պարունակում է մեծ  
քանակությամբ աննղարար նյութեր: Թափվող  
տերեւները հողին են վերադարձնում բույսի մեջ  
ամբարված հարուստ նյութերը և կազմում փառ-  
հող, վորից հետեւյալ տարին բույսը դարձյալ  
պետք է յետ վերցնի: Իհարկե, փառհող կազմվե-  
լու աշխատանքի մեջ մասնակցություն ունեն  
զանազան սունկեր, միջատներ, բակտերիաներ և  
փորդեր, մասսավանդ, ձեզ լավ ծանոթ անձրե-  
փորդը:

Թե վորքան մեծ և թափված տերեւների  
վերադարձած նյութերի քանակը — յեկեք ձեզ  
հետ մի փոքրիկ հաշիվ անենք:

Վերցնենք մի միջակ մեծության ծառ. ըն-  
դունենք թե նա Շ մետր բարձրություն ունի և  
50 հատ մանր ու խոշոր ճյուղեր: Հաշված ե,  
վոր մի այդպիսի ծառի վրա առնվազը կը գտնի

250,000 տերէս Ամերիկա մի տերէր սիջին թվով կշռում է 2 գրամմ, ուրեմն ամեն ապրի այդ ծառից թափում է, մոտավորապես, 500 ըլու գրամմ տերէս:



Նկ. 4 Տերևաթափ

Ի հարկե, մի մեծ բան չե, բայց յեթե հաշվի առնենք հազարավոր և տասնյակ հազարավոր լանտատերեւ ծառերի թափած տերեները, այն ժամանակ կարելի յե յերեակալել, թե բնչակիսի հսկայական քանակությամբ նյութ են նրանք վերադարձնում հաղին ամեն աշուն:

Դեռ տերևաթափից առաջ, տերեների փափուկ մասերում գտնված աննդարար նյութերը տեղափոխվում են բույսի մյուս մասերը՝ ցողունի, արմատի, պալարի կամ կոճղարմատի մեջ, վօրտեղ ավելի ապահով են ձմրան ցրտերից պաշտպանվելու համար:

Վերջապես տերևաթափի շնորհիվ բույսերն ազատվում են մի այլ վտանգից: Լայն ու տափակ տերեներ ունեցող ծառերն անկարսզ կը լինեին ձմրան ձյան ծանրության տակ դիմանալ, նրանց ձյուղքերը կը կոտրատվելին:

Ահա, այն բոլոր կարեսը նշանակությունները, վոր ունի տերևաթափը բույսի համար:

#### 4. Ի ՆՉՊԵՍ Ե ԿԱՏԱՐՎՈՒՄ ՏԵՐԵՎԱԹԱՓԸ

Այս ել ուշագրության արժանի յերեսութեա Հավաքեցեք թափված տերեներ և մի առանձին հետաքրքրությամբ դիտեցեք նրանց կոթերի ծայրը և ձյուղքի այն մասը, վորտեղից նրանք կտրվել են, ալսպես կոչված—սպին:

Վորպեսզի տերեր շատ հեշտությամբ պոկվի ձյուղքից, տերեակոթի «հիմքին» մոտիկ առաջ ե գալիս մի առանձին շերտ, վորին ընդունված անվանել—բաժան արար շերտ: Այդ շերտը լոցանի փխրուն բջիջներից և կազմված, վորոնք

Հեշտությամբ սիմջանցից բաժանվում են; Յերբ բաժանարար շերտը վորոշ զարգացման և հասնում, շատ անդամ ամենաթեթև հարվածն եք բավական է, վոր նա վայր ընկնի: Տերեք վայր ե ընկնում տն պատճառով, վոր իր սեփական ծանրությունն անդամ անկարող է կոթը պահել: Սովորաբար տերեւթափին նպաստում են արտաքին պայմանները, Մի թեթև քոմի, գիշերվաս սառնամանիքը և նրան հետեւող առավոտվաս հալոցը՝ այս բոլորը ոգտում են տերեների թափվելուն: Բոլորովին հանդարտ յեղանակներին և հաղարափոր տերեներ թափում և ցրվում են զանազան կողմեր:

Թափված տերենի կոթի ծավոն այնպիսի ապարագությունն է անում, կարծես, սուր դանակով կտրված լինի: Զանազան տերեների մոտ այդ կտրվածը զանազան ձեր յե լինում՝ պայտաձե, յեռանկունի, կոր և ալին:

Կան տերեներ, ինչողես որինակ, խաղողի վորթի տերեր, վոր յերկու բաժանարար շերտ են ունենում, մեկը՝ կոթունի հիմքում, իսկ մյուսը՝ սկուտեղի և կոթի սահմանում. բարդ տերեները՝ մեկն՝ ընդհանուր կոթի հիմքում և հետո յուրաքանչյուր տերենիների կոթերի հիմքում:

## Բ. ԱՇԽԱՆ ԳՐԻՑՆԵՐ

Վորքան ել, վոր ախուր ապավորություն և անում տերեւթափը մեղ վրա, ախուամենայնիվ աշունն ունի նաև իր առանձին գեղեցկությունը: Տերեները զրկվում են իրենց կանաչ գույնից, բայց նրա փոխարեն մեղ տալիս են գեղին, նարնջագույն, կարմիր, մանուշակագույն և հազարու մի նուրբ լերանզներ:

Միթե հետաքրքիր չե իմանալ, թե ինչու աշնանը բոլոր ծառերի ու թփերի տերեները թափվելուց առաջ այնպիսի բազմազան գույներ են ստանում:

Ի հարկե, հետաքրքիր և և շատ ելքմվար չե այդ յերեւութի պատճառն իմանալ, յեթե առհասարակ ուսումնասիրենք ամենորյա մեր տեսած ծաղիկների գույները: Վերջապես կտրող ենք ծաղիկները մի կողմ թողնել և վերցնել ամենքիդ լավ ծանօթ պտուղները՝ բալը, կեռասը, մորին, մոշը և այն, փորնց գեղեցիկ գույներով միշահիանում եք: Դուք բոլորդ ել զիտեք, վոր այդ պտուղներն սկզբում կանաչ գույն են ունենում, հետո կարմրում և ուրիշ գույներ են ստանում: Ուրեմն այստեղ ել նույն գունափոխությունն է տեղի ունենում, միայն վոչ անսպատճառ աշնանը, ի հարկե:

Ուրեմն տեսնում եք, վոր առհասարակ հետաքրքիր և բուլսերի, ծաղիկների, պառզիների և տերեների գունաթափության պատճառն իժամալլը: Բայց ամեն մի լերեռւթի պատճառը գտնելու միակ միջոցը վորձն եւ: Յեկեք մենք եյ մի քանի փորձերով աշխատենք պարզել այդ հետաքրքիր լերեռւթը:

Փորձ 1.—Ահա ձեզ համար մի փորձ, վոր ամենքդ ել շատ հեշտությամբ կարող եք անել ձեր տանը: Վերցրեք կարմիր կուղամբ կամ ձակնդեղ և լավ լիփեցեք: Նրանք իրենց կարմիր գույնն անպատճառ ջրին կտան: Յեթե այդ լիփած ջրի իհջ մի քանի կաթիլ անուշագրի վոգի (նաշագրի) կամ սուզա կաթեցնենք, նա սկզբուն կտանա մանուշակի դույն, հետո կապույտ, հետո կանաչ և վերջը գեղին: Նույն փորձը կարող եք անել կրաջրով և մոխրա-ջրով:

Փորձ 2.—Մանուշակ ամենքդ ել տեսել եք: Վերցրեք վորեն ծաղիկ վոր նրա գույնն ունենա, դրեք ապակե անոթի տակ և նրա կողքին մի փորբիկ առանով քացախ կամ վորեն թթու: Այդ ծաղիկն իսկույն կը կարմրի: Քացախի փախարեն դրեք անուշագրի վոգի, նա ն րից կ'ապատի ապա կլանաչի և վերջը կը զեղնէ:

Այս փորձերից մենք կարող ենք լեզրակացնել,

վոր բնության մեջ ել ծաղիկների և տերեների գունափոխության պատճառը նման թթուները և դանագան նկութերը պետք ել լինեն:

Իսչու այս լերեռւթն անպատճառ տերեների հետ աշնանն եւ կատարվում և բնչ նշանակություն ունի բույսի համար:

Այս հարցին ողատասխանելուց առաջ, չը մոռանաք ասել, վոր բույր բույսերն աշնանը չեն գունափոխվում, այլ միայն նրանք վորոնք լինելու կարիքում են տերեաթափի: Որինակ վշատերեն ծառերը, վորոնց տերեները հաստ և ասեղնաձեն, միանգամից չեն թափվում և միշտ մնում են կանաչ: Ուրեմն կարող ենք ասել, թե գունաթափությունը տերեաթափի հետ կապ ունեցող մի լերեռւթ եւ:

Մենք արդեն ասացինք, վոր տերենաթափից առաջ տերեների մեջ գտնված մննդարար նկութերը հետզհետեւ տեղափոխվում են բույսի արմաները, ցողունները և այլ մասերը իբրև պահեստ և մնում մինչև գարուն: Ուրեմն աշնանը բույսերը ձմրան պատճառություն են տեսնում: Ահա, բույսերի արդ աշնանային աշխատանքների մեջ մեծ գեր են կատարում տերեների կարմիր ու գեղին գույները: Նրանք արեի ձառագայթ-

Ներից խլում են բավականին ջերմություն, վորը նպաստում է նյութեր ամբարելու գժվարին աշխատանքին: Մենք գիտենք, վոր աշնան յեղանուկներն զգալի կերպով ցրառում են և արեն համեմատարար ավելի թույլ ջերմություն եւ տալիս: Կանաչ տերեներն ընդունակ չեն արեի նվազ ջերմությունից այն չափով ոգտվելու, ինչ չափով ոգտվում ելին գարնանը կամ ամառը, իսկ կարմիր ու դեղին գույները այդ քշից ել բավական ջերմություն խլում են: Ահա այն մեծ նշանակությունը, վոր աշնան գույներն ունեն բույսի համար:

Մյուս կողմից ել տեսանք, վոր գունափոխության պատճառը թթուներն են, նշանակում ե, յեթե այդ թթուներն ամբարված մնային բույսի մեջ կարող ելին նրան թունավորել: Տերեները թափելով իրենց հետ տանում հեռացնում են մեծ քանակությամբ վնասակար թուներ: Ուրեմն այստեղ ել թափվող տերեները մի ոգտակար դեր են կատարում: Նրանք բույսի համար նույն նշանակությունն ունեն, ինչ վոր կենդանիների համար յերի կամ երը:

Աշնան գույների պատճառներն իմանալուց հետո մենք այժմ կարող ենք ասել, վոր գեղեցկի տակ, թագն ված եւ տնտեսական ոգութը:

Աշնան հրաշալի գույները վոչ թե մեր աչքերին հաճույք պատճտուելու համար են, այլ բույսերին վտանգից պաշտպանելու: Յեթե այդ գույները չլինելին բույսերը կը զրկվելին ամառը հավաքած նրութերի բոլոր պաշարից և չպիտի կարողանային հետեւալ գարնանը նոր աերեներ, նոր բողբոջներ և ծաղիկներ տալ:

Տերեւաթափն ու աշնան գույները մեզ շատ ըաներ սովորեցրին:

---



«Ազգային գոադարան»

A standard linear barcode is located at the bottom right of the page, consisting of vertical black lines of varying widths on a white background.

NL0261623

14393

ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ